

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի՝
2015 թ. հունիսի 29-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի
(հարցման կարգով)

ք. Երևան

Հարցման կարգով նիստին մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 32 անդամներից 24-ը (կից ներկայացվում են Խորհրդի անդամների գրանցման և արձանագրության ստորագրացուցակները):

Օրակարգը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին գույք օտարելու թույլտվություն:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին գույք օտարելու թույլտվություն: Խորհրդի քարտուղար Մ. Մալխասյանի կողմից Խորհրդի 32 անդամներին առաքվել են ԵՊՀ հյուրերի տան օտարման նախագիծը և քվեարկության թերթիկները: Վերջիններս լրացրել և վերադարձրել են Խորհրդի անդամներից 24-ը: Քվեարկության արդյունքները հետևյալն են. կողմ՝ 22, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1:

Որոշվեց.

Դեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 18-րդ ենթակետով, ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 18-րդ ենթակետով և 3.4. կետով՝

1. Թույլատրել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մաշտոցի պողոտա 52 հասցեում գտնվող 3140,6 քմ. մակերեսով շենք-շինությունները (ԵՊՀ հյուրերի տուն) և դրա օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0,180192 հա հողամասը (սեփականության վկայական՝ 01072015-01-0071) (այսուհետ՝ անշարժ գույք) օտարել մրցույթով:

2. Լիազորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառավարիչ-ռեկտորին՝

1) ապահովել անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման գործընթացի կազմակերպումը,

2) մրցույթը կազմակերպել և անցկացնել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին համապատասխան՝ այդ նպատակով ստեղծելով մրցութային հանձնաժողով,

3) մրցույթի հաղթողի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, իսկ գործարքից ստացված գումարը մուտքագրել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի բանկային հաշվեհամարին՝ հիմնադրամի զարգացման ծրագրերի իրականացման նպատակով օգտագործելու համար:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Մ. Մալխասյան